

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը հայտարարում է մրցույթ՝ աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

1. իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ 69-3.1-7)

Բաժնի գլխավոր մասնագետը՝ Բաժնի պետի հանձնարարությամբ Օրենսդրական դաշտի ապահովման նպատակով իրականացնում է մարզի համայնքների ավագանու որոշումների, մարզային ենթակայության հիմնարկների և ընկերությունների ղեկավարների կողմից տրված հրամանների ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ անհրաժեշտ խորհրատվություն տրամադրելու աշխատանքները, Օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրարկումն ապահովելու նպատակով համայնքների ղեկավարների աշխատակազմերին տրամադրում է մեթոդական և գործնական օգնություն:

Նախապատրաստում է ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի քննարկմանը ներկայացվող որոշումների նախագծեր, ինչպես նաև իրականացնում է մարզային ենթակայության կազմակերպությունների և ՓԲԸ-ների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրումը և օրենսդրությանը հակասող իրավական ակտերի վերացումը կամ կասեցումը, մարզպետի կողմից վարչական տույժի ենթարկելու որոշման նախագծի նախապատրաստումը:

Իրականացնում է Մարզպետի որոշումների և կարգադրությունների, Աշխատակազմի ղեկավարի հրամանների նախագծերի նախապատրաստումը, Մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից նախապատրաստված նախագծերի իրավական ակտերի համապատասխանության աշխատանքները:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

<<Իրավագիտություն>> մասնագիտությամբ բարձրագույն կրթություն:

Մրցույթը կկայանա 04.03.2014 թ. ժամը 14:15-ին, Բ.Եղեգնաձոր:

նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝

քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ:

Դիմող ՀՀ քաղաքացիները ՀՀ Վայոց ձորի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

*դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս)

*տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայականի(ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին:

*արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք:

*մեկ լուսանկար՝ 3x4 չափսի

*անձնագիր և անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացիները մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիր

ՀՀ քաղաքացիները մրցութին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից 18:00

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2014 թ փետրվարի 5-ը:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Վայոց ձորի մարզպետարան:

Հասցեն՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5:

Հեռ (0281) 2-22-52, 2-55-95:

